կանասցի այնու Բդեշխն, արասցէ որպէս և կամի ։ Զայս ամենայն դէպս գրեաց Թէոդորոս Պատրիարք երկար բանիւք առ Գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպօլիս, և խնդրէր գտանել հնարս ազատութեան, եւ թափել զինքն 'ի բռնութենէ Կուսակալին և 'ի դաւաճանութենէ Քաղաքապետին ('ի 17 Մարտի)։ Կուսակալն Սիդոնի Սիւլէյման Փաշա Մ--Բէգիւլ դրան տաճարին Ս․ Յարութեան, խնդրէր յառաջագոյն զմեծ գումարս 'ի Հայոց, որում խոստացեալ էին տալ մինչեւ 40,000 դահեկան, և նորա չէր հաճեալ, այլ 'ի սմին ժամանակի գրեաց առ Թէոդորոս չպահանջել ինչ, զի լսելով զնեղութիւնս նորին 'ի գումթ չարժեցաւ, և հրամայեաց յետս դարձուցանել զ10,000 դահեկանն, զոր առեալ էր Յոպպէի Մէհէմմէտ աղայն, որ և արար իսկ, և ինքն ետ 30,000 դահեկան և էառ փոխանակագիր հատուցանել Փոխանորդին 'ի Կոստանդինուպօլիս ։ Գրեաց Թէոդորոս Պատրիարք առ Փոխանորդն առնուլ հրաման յԱրքայէ եւ առաքել աստաղծ եւ զայլ կարեւոր պէտս եւ զգործաւորս վասն շինութեան թերի մնացեալ տեղեացն Հայոց 'ի Ս․ Յարութիւն, զի գործաւորքն որք եկեալ էին յառաջագոյն ընդ Ադամ Գալֆայի մեկնեցան, զորոց զծախսն հոգայց նա ինքն Թէոդորոս, և պատրաստեաց թաւիշ վարագոյրս կախել ըստ առաջնոյն 'ի սեփհական տեղիս Հայոց 'ի վերայ սեանց 'ի Ս․ Յարութիւն, այլ Յոյնք ընդդէմ կացեալ արգելին զայն, և մնաց խափանեալ մինչեւ ցայսօր ։ Խնդրեաց նաեւ զպատմութիւնս անցիցն որք անցին յաւուրս իւր 'ի Կոստանդինուպօլիս, զոր գրեալ էր անդ Փոխանորդ Պօղոս վարդապետն, որպէս եւ Դիոնէսիոս զանցս Երուսաղէմի․ զի միաւորեալ զերկոսեանն տացէ տպագրել ։ Սակայն գըրուածք Պօղոսի չերեւին 'ի միջի, այլ միայն որ գրեցաւ յԵրուսաղէմ, յորմէ քաղեալ եդաք 'ի կարգ պատմութեանըս, զոյգ ընդ նմին ունելով և զնամականիս Թէոդորոսի ։ Սակայն առանձին գրեալ և համառօտեալ դրքոյկն վասն բաժանորդութեան Բեթղեհէմի բարձաւ 'ի միջոյ Աթոռոյն 'ի ձեռն անհաւատարիմ ոմանց ։